

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. Շտիկյան

ՆՈՐ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ «ԱԳԱՊԻ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ

Հայ կաթոլիկների և հայ լուսավորչականների հնամենի պայքարն իր ողջ ուժով շարունակում էր փոթորկվել անցյալ դարի 50-ական թվականներին: Այն առավել ցայտունություններ հանդես էր դալիս Պոլսում, որովհետև, ըստ ամենայնի, այստեղ էին իրար հետ բախվում «Հոռմի պապերի» որրազան հավատն» ու լուսավորչականությունը:

Ինչպես և պետք է սպասել՝ պայքարն ընդդրկեց նաև գրականությունը: Հանդես եկան բազմաթիվ գրքեր, ինչպես զուտ կրոնական, այնպես էլ գեղարվեստական, որոնք արտացոլում էին, կամ իրենց վերաբերմունքն էին ցույց տալիս վերոհիշյալ հարցերի նկատմամբ: Այս պայքարի ուրդունքն է և «Ագապի» վեպը, որն իր սուր ծայրով ուղղված է պապականության դեմ: Մեղ հաջողվեց գտնել մի շարք նոր տվյալներ, որոնք որոշ պարզաբանումներ են մտցնում «Ագապի»-ի և նրան առնչվող մի շարք հարցերի մեջ:

«Նոյեան աղանի»-ն 1822 թվականին տպագրում է մի հոդված, որը մեջ ենք բերում աննշան կրճատումներով:

«Այս օրերս «ԹՈՓԱԼ ՇԵՅԹԱՆ»՝ անունով զվարճալի պատմություն մը հրատարակվեցավ, որ երևելի Լըսաժին «ՏԻԱՊԼԸ ՊՈԱԹԷՈ» (Կաղ սատանա) ըսված գաղիարեն եղինակության թարգմանությունն է: Այս գիրքը թարգմանող ուսումնագետ հայագրին (որ հառաջարանությունը Յ... Վ... ստորագրութենեն մեծապատիվ Հոսեփ աղայ Վարդանյան ըլլալը կը կարծվի) այս աշխատության մը նոր ապացույց մը կուտա յուր քաջ տեղեկությունը գաղիարեն և տաճկերեն լեզվաց մեջ: Նոր ապացույց մը կըսեմք, որովհետև հիշյալ ուսումնագետ անձը, արդեն հառաջուց ապացուցած է յուր լեզվագիտությունը, շատ տարիներն հետև Գայսերական տերության թարգմանի երևելի պաշտոնի մը մեջ գտնվելովը:

... Ավելորդ է ըսելը, թե այս տեսակ աշխատությունը որչափ օգուտ կրնա բերել ընթերցողներուն: Այսու ամենայնիվ զարմանոք կը տեսնամք, թէ Դեր. Հասունյան և պիսկոպոսը այս գիրքը ձեռք առնողներուն զեմ քաղաղրանաց հին ավուրց ղենքը վերուցեր է, գուցե զանիկա բարոյական վարուց խանգարիչ կամ կրոնից հակառակ համարելով:

Չարմանոք կըսեմք, — որովհետև բանագրանաց առատաձեռն կամ առատագրիչ անձը արդեն փորձով տեսավ, որ թե այս բոնություն միջոցը որչափ հակադարձ աղգեցություն ըրավ անցյալները «Ագապի հիքեայեսի»

1 Հոդվածում եղած ընդդոմները մերը չեն:

գրքին վրա, որուն ավելի շուտով վաճառվելուն առիթ մը եղավ: Գուցե այս կերպով գերասպատիվ բանագրողը օգնություն մը ընել կուզէ «Կաղ սատանայի» պատմութեան թարգմանողին, որպէսզի իրեն աշխատութեան պտուղը գյուրավ և շուտով վաճառվի, ինչու որ այս լուսավորչալ գարուս մեջ բանագրանքին մօտան անո՞ւս է և ուրիշ ազդեցութիւն մը չունի. բայց միայն հասարակական հետաքրքրութիւնը արթնցունել ու բանագրված գիրքը գոնե անգամ մը կարգալու փափաքը գրգռել, որով և վաճառման գյուրութիւն մը տալ:

... Ըստ մեր կարծեաց այս տեսակ գիրքը մեր հասարակութեան ավելի օգուտ կրնա ընել, քան թէ փաստ. մանավանդ, որ հարգո թարգմանիչը մեր ազգին համար փաստակարութեան ստուերն անգամ ունեցող հոգիածները գուրս ձգած է»:

Հովսէփ Վարդանյանի (1815—1879) ստեղծագործութեան մասին այժմ մենք բավական լրիվ պատկերացում ունենք: Նա գրել է «Սահմանագրական ճշմարտութիւնք»-ը, ծավալուն մի գործ ֆրանսիական ռեպուբլիկայի մասին և այլն: Նույն հեղինակին է պատկանում և «Ազգայի» վեպը: Նրանն է և «Պօղոսիոյ ընտանիքի» երգիծական վիպակը:

Ֆրանսիացի նշանավոր գրող Ալեք Լեսաժի «Կաղ սատանայի» թարգմանութիւնն, անկասկած, պատահական չէ: Ինչպէս հայտնի է, Լեսաժի ռեպուբլիկական գրականութեան խոշոր ներկայացուցիչներից մեկն էր Ֆրանսիայում, իսկ նրա՝ վերոհիշյալ գործը մեծ չափով նպաստեց ռեպուբլիկ վերականգնմանն իր իրավունքների մեջ: Արեւմտյան Հայաստանում, երբ նոր-նոր սկսել էր ձեւավորվել ռեպուբլիկ մտայն ուղղութիւնը, այսպիսի գործն անկասկած, մեծ արժեք կունենար: Ահա թէ ինչու է այն արժանացել «Ազգայի» վեպը գրող Հովսէփ Վարդանյանի ուշագրութեանը:

Հոգիածի երկրորդ մասը լույս է սփռում «Ազգայի»-ի վրա: Եթե մեզ հայտնի է, որ Հոսի Պրոպագանդան արգիլել է գիրքը² այժմ հայտնի են դատում ևս մի քանի միջանկյալ օղակներ: Պարզում է, որ հայ կաթոլիկութեան պարագլուխ Անտոն Հասունյանը «Ազգայի»-ն լույս տեսնելուց հետո կոնգակով այն բանագրում է, որպէս վտանգավոր ու փաստակար: Մեծ հաջողութեց գտնել այդ կոնգակը.

«Հոսիական ուղղափառ եկեղեցին հոգևոր օրգիսցը վրա ամեն իժիր(?) իրեն գուրն ու խնամքը ցցուցեր է, թէ անսխալ վարդապետութեամբ գիրքնք կրթելով և թէ ամեն կերպ մոլութենե զգուշացնելով: Ուստի, ուր որ ուղղափառ հավատքի կամ բարի վարուց փաստակար աղանդ մը կամ գրված մը տեսած կամ գտած է նե, շուտով վրա հասեր ու իրեն հավատացյալները հոգևոր վտանգներե ազատ ու անարատ պահելու ամեն կերպ զգուշութեան միջոցները միշտ գործի գրեր է: Մենք ալ, այս օրերս տեսնելով «Ազգայի հիքեայեսի» անուամբ գարերնուս ապականած մտքերով տաճկերեն շարագրված ու հոս տպված գրքույկ մը, մեր հովիական հսկողութեան պարտուցը հարմար քննեցինք դանիկա, ու այլ հմուտ եկեղեցականներու ալ քննել տվինք ու մեր հանձնարարական ժողովեն ալ խորհուրդ հարցնելեն ետև, վերոհիշյալ գրքույկը մանավանդ բարի վարուց

¹ «Նոյեան աղանի», 1852, № 60:

² Տես մեր հոգիածը. «Տեղեկագիր», 1955, № 8:

ապականիչ ու երիտասարդական թարմ ուլին չարի գրգռող դատեցինք:

Ասոր համար մեր հովվական պաշտոնեն կստիպվինք ծանուցանելու ձեզի, թէ այս դրքույկը բնական ու եկեղեցական օրենքներե արգելված է, որն որ իրոք մենք ալ այս կոնդակովս կարգիլենք զանիկա կարգալու կամ պահելու և կը հորդորենք մանավանդ ծնողքները, որ այս ֆասսակար դիրքը իրենց տնեն հեռացնեն ու ամէն կերպիւ գավկներնին անկից զգուշացնելու Գանան:

Կը հուսամք, Աստուածասեր ժողովուրդ, որ ամենքնիդ ալ մեր այս հայրական ազգարարութիւնը մտիկ ընելով, ձեր որդիական ու քրիստոնեական պարտքերը կատարած պիտի ըլլաք, որով մենք ալ ուրախ սրտիւ ձեզի Աստուածային օրհնութիւնը առատորէն կը շնորհեմք՝ Կոստանդնուպոլիս, 23 փետրվարի (6 մարտի) 1852 թ.:

Բայց այս բանագրանքը, ինչպէս վկայում է «Նոյեան աղանու» հոգւովածը, ազդեցութիւն չի ունենում: Բանագրված գիրքը վաճառվում է ավելի արագ և սիրով կարգացվում ընթերցողների կողմից: Եւ անա, «Արշալոյս Արարատյանի» 1852 թ. № 425-ում կարդում ենք.

«... Դերապատիւ Հասունյան գահերեց արքեպիսկոպոստ ամսույս 13-ին քաղիական շոգենավով մեկնեցաւ Հոռով երթալու»¹:

Բնարկե, Հասունյանի Հոռով մեկնելու արմատական գրգայատածառը «Ազգայի»-ն չէր: Նույն թվականին լույս էին տեսել մի շարք պարսապարեր կաթոլիկութեան ու հայ կաթոլիկների դեմ, վերջիններս էլ պատասխան գրքեր էին տպել և այլն: Գոստանդնուպոլսի հայութեանը ծվատող այս պայքարի համար էր, հիմնականում, որ Հասունյանը կանչվում էր Հոռով: Բայց կարիք կան ասելու, որ «Ազգայի»-ն բանագրած և հաջողութիւն չտեսած Հասունյանն այս գրքի մասին և նրա հակակաթոլիկական բնույթի մասին անպայման տեղյակ կպահեր Հոռովի Պրոպագանդային, որն էլ իր հերթին բանագրել է «Ազգային»:

Ուրեմն.

«Ազգայի»-ն լույս տեսնելուց հետո բանագրվել է Անտոն Հասունյանի կողմից, որը համոզվելով իր բանագրանքի անուժութեան մեջ օգտագործելով Հոռով գնալու պատեհ առիթը, Պրոպագանդային իրազեկ է դարձնում նորահայտ գրքի մասին, որոնք էլ որսչումով արգելում է այն:

¹ «Արշալոյս Արարատեան», 1852, № 411: